



Փարիզի լրագրիչները լուր կուտան թէ Փարիզի օսմանեան դեսպան Ա. սեմ. Ա. Տէմա Ա. Կիլիզ Էֆէնտին մայիս 6/18 ին օրը գետնապահան մեծ կոշտեր մը ըրեր է, որուն ներկայ գտնվելը են գլխաւոր տեղութեանց գետնապահները, Պարզից կառավարութեան պաշտօնակցները, տեղութեան ժողովներուն նախագահները եւ ուրիշ երեւելի պաշտօնատարներ :

Պուսից կայսեր եղբայր Արիզայոս մեծ դուքսը Փարիզ հասեր է :

Հնգիստանէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն, թէ Պոմպոյի ու Մատրասի անգղիական իշխանութիւններուն հրաման զացերէ որ այլ նու. չը խրկին Չինաստան, եւ Մատրասինաւ նստելու վրայ եղող դուռերը հրաման եղեր է որ ետ դառնան : Ասից կը հետեւեցնեն թէ Մարտիոյ ու Պարզից տեղութեանց Չինաստանի հետ ունեցած վեճը առանց պատերազմի լինելու յոյս կայ :

Պուսից տեղութեան երկիրներուն մէջ մանր արծաթ դրամները գանաղան արուեստական նիւթոց մէջ գործածվելու կամ օտար երկիրներ տարվելու պատճառաւ օրէ օր սակսելով, կառավարութիւնն ասոր առաջին անգամ համար որոշեց որ 20, 15, 10 եւ 5 քարիքնոց արծաթ դրամներ կոխի 71/96 խառնուածքով, այնպէս որ իրական արծաթին անուանական արծաթէն հարիւրին 15 վար ըլլայ :

Առաջին անգամ այս նոր դրամներէն վեց միլիոն արծաթ բուլլետի կամ քառասունի չափ պիտի կոխվի, եւ իրենց շրջաբերութիւնն ալ սա պայմանով պիտի ըլլայ որ մասնաւորաց իրարու ըրած վճարքներուն մէջ երեք բուլլետէն աւել չկրնայ տրվիլ : Բայց դաւաններուն մէջ տեղութեան սնտուկներն ամբողջ պիտի ընդունին այս ստակին որ եւ իցէ դուրսընդ որ իրենց վճարվին թէ տուրքի եւ թէ ուրիշ բանի համար :

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Արալի օրը իրիկուան դէմ օգոստոսապետ Ինքնակալը իւր սենեկապետներէն մէկը խրկելով Մեծ Եպարքոս բարձրագատիւ Մեծհայր Բիշոփի փաշային, իմացուց որ իր պաշտօնէն հրաժարեալ էր :

Այն իրիկուներ բարձրագատիւ Պարզից Մեծհայր փաշան արքունի պալատը հրաւիրվելով Մեծ Եպարքոս անուանեցաւ :

Երկու շաբթի օրը նորընտիր Մեծ Եպարքոս բարձրագատիւ Պարզիցը Մեծհայր փաշան հանդիսել Ռ. Դուռը դնաց, եւ հոն օգոստոսապետ Ինքնակալին խաթիւնի հիւնարունը կարգացվելէ եւ ուրիշ սովորական արարողութիւնները կատարվելէ ետեւ, Թանգուսթի նախագահ բարձրագատիւ Ալի փաշային հետ Թօփգարուի պալատը գացին եւ օգոստոսապետ Ինքնակալին ներկայացան :

Ահա արի օգոստոսապետ Ինքնակալին առ նորընտիր Մեծ Եպարքոսն ուղղած խաթիւնի հիւնարունի թարգմանութիւնը :

« Իմ մեծաշուք Ա. Էղերս . « Մեծ Եպարքոսութեան պաշտօնը Բիշոփի փաշայէն առնելով թեղե յանձնընկեցաւ իւր եւանդիկ ու հան-

ձարեղութեանդ պատճառաւ : Ուստի, դուն իմ միւս նախարարացս հետ ամեն ջանքդ ի գործ պիտի դնես Տեղութեանս գործերը զոհարուցելու կերպով յառաջ տանելու համար : »

Երեքշաբթի օրը իրիկուան դէմ օգոստոսապետ Ինքնակալը երկրորդ խաթիւնի հիւնարուն մը խրկելով բարձրագատիւ Մեծ Եպարքոսին, իմացուց որ իւր ամեն կարգի հպատակաց եղանակութեանն ու վիճակին բարելաւութեանը համար ունեցած հայրական խնամօքը հրաման կրնէ նորին բարձրութեան, որ Բուսիցի գաւառներուն այցելութեան կրնէ :

Բարձրագատիւ Պարզիցը Մեծհայր փաշային բացակայութեան ժամանակը, Մեծ Եպարքոսի պաշտօնը բարձրագատիւ Ալի փաշան պիտի վարէ Պայմագամի տնտեսով :

Պարսից Ա. Շահը իւր Արիւծու եւ Արեգական մեծ պատուանշանը խրուած ըլլալով օգոստոսապետ Ինքնակալին, շաբթի օրը մայրաքաղաքիս Պարսից դեսպանը հանդիսել Տոլմա Պահալի կայսերական պալատը գնաց, եւ վերջիջեալ պատուանշանը օգոստոսապետ Ինքնակալին մատուցեց :

Ռ. Դրան բոլոր նախարարները ներկայ էին այս հանդիսաւոր ընդունելութեան :

Յունաց ամենագատիւ Քիւրիոզ պատրիարքն անցեալ շաբթու հրաժարականը տուաւ, եւ Ռ. Դուռն ալ ընդունեց :

Իւր յաջորդին ընտրութիւնը անցեալ տարի Յունաց ազգին մէջ հաստատված ազգային ընդհանուր կանոնադրութեան համեմատ պիտի կատարվի :

Յիշեալ կանոնադրութեան նայելով, բոլոր դաւաւաց առաջնորդներն ու շրջապատները մինչեւ երկու ամիս իրենց քուէները Պատրիարքարան պիտի խրկեն, եւ ետքը հոն ընդհանուր ժողով ըլլալով, թէ դուրսերուն եւ թէ մայրաքաղաքիս քուէները պիտի համըրվին, եւ ամենէն աւելի քուէ ստացող եպիսկոպոսը պատրիարք պիտի անուանի :

Մայրաքաղաքիս խրայեյացոց խախտազուրկն ասիկէ քանի մը շաբթուառաջ վախճանելով, անոր տեղը Սինեօր Ալիօր Եպարքոս Ա. Պօլոյ խրայեյացոց ազգին խախտազուրկն ընտրվեցաւ : Արմիլ թէ այս նորընտիր խախտազուրկը ազատամիտ անձ մըն է :

ԱԶԳԱՅԻՆ

Շաբթի օրը Ա. Պօլոյ Նորընտիր Պատրիարք ամենագատիւ Տ. Սարգիս Սրբազան արք եպիսկոպոսը Ռ. Դուռն երթալով, պատրիարքական պաշտօնին հաստատութիւնը ստացաւ կայսերական կառավարութեանէն :

Այս հանդիսաւոր արարողութիւնը եւ մանաւանդ Նորին Սրբազնութեան հանդիսել Ռ. Դուռնի Պատրիարքարան վերաբառնալը անսնելու բաղձանօք, հազարաւոր հայ ժողովուրդ Ռ. Դրան գաւթին եւ սրահներուն մէջ եւ բոլոր անցնելու ձամբայներուն վրայ դիպելու էին մինչեւ Պատրիարքարանի դուռը : Ժամը տասն եւ մէկուկէսին Նորին

Սրբազնութիւնը Ռ. Դուռն ձամբայ ելաւ բազմութիւ վարդապետներու, քահանայների, Ռ. Դրան պաշտօնատարներու եւ ազգային երեւելիաց ուղեկցութեամբ : Երբոր Պատրիարքարանի փողոցին անկիւնը հասաւ, եկեղեցականաց դասը զգետնուորեալ եւ քաղաքաւայն մանկունը հոգեւորական երգերով դիմաւորեցին Նորին Սրբազնութիւնը եւ ուղղակի մայր եկեղեցին տարին, ուր այս պարագայիս մէջ սովորական եղած արարողութիւնը կատարվելէ ետեւ, Սրբազան Պատրիարքն օրհնեց ժողովուրդը, եւ հանդիսել Պատրիարքարան տարվեցաւ :

ՆԱԽՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտատի նախորդ կուսակալ Սերտարը-Էջբերէմ Էջմէր փաշան անցեալ շաբթու Ա. Պօլոս հասաւ :

Քանի մը շաբթի ի վեր նորին թաթար դաղթականներ հասնել ըսկրան Ա. Պօլոս, եւ ասիկէ ալ հետոյ հետեւ Արիւսիայի ծովեզերքները կը խրկվին իրենց համար որոշված տեղերը բնակութիւն հաստատելու :

Յունաց Ա. Էմինա լրագիրը կը պատմէ թէ Թօփհանէ բնակեալ տաճիկ երիտասարդ մը արգէն ամուսնացեալ եւ երկու դաւակաց տէր իւր դրացիներէն զեղեցիկ աղջկան մը կը սիրահարի, եւ տեսնելով որ աղջկին ամենեւին չը նայիր իր երեսը, կը բարկանայ եւ դանակով ինքզինք կը մեղրունէ :

Յիշեալ լրագիրը նաեւ հետեւեալ զողութեան դէպքը կը պատմէ :

Անցեալ չորեքշաբթի օրը վերջին աստիճան վայելութեամբ հազված երիտասարդ մը Վարազդիկ կամուրջին վրայ պտտելով սեւեր հագած տիկին մը կը տեսնէ որ անդին կուգար, քովը կը մօտենայ ու քաղաքավորական խօսքերով հետի կը խօսակցի, եւ վերջապէս այրի ըլլալը խմանալով կնութեան աւելու առաջարկութիւն կրնէ ըսելով թէ Խափար խանը վաճառական է ինքը : Միամիտ տիկինը հաւատարմով քիչ մը վարանելէ ետեւ վերջապէս կընդունի իրեն եղած առաջարկութիւնը :

Երիտասարդը մեծ ուրախութիւն ցոյց տալով, կառաջարկէ իր հարսնացուին որ անմիջապէս Ա. Պօլոյ շուկան երթան ի միասին եւ հոն իրեն համար քանի մը կը տոր զոհարեղէն ընտրէ :

Տիկինը հաճութիւն կուտայ, եւ թեթեւի տալով կընեն շուկան, ակնավաճառի մը խանութ կը մտնեն : Երիտասարդը զոյգ մը ապարանջան (պլիւզիկ), երկու դուռ եւ մասնի մը կընտրէ, ամենը 25000 դուրուշ չափ արժողութեամբ, եւ կրտէ ակնավաճառին որ այն զոհարեղէններուն ստակը անմիջապէս պիտի վճարէ իրեն, բայց առաջ կուղէ հասկընալ թէ այնչափ ստակ կարժեն մի : Ակնավաճառը կատարելէ որ արժեքընել ապ օրու որ կուղէ : Արեւմտ կրտէ երիտասարդը, նշանաձ հոս թող նստի եւ քու աշխարհը հետս թող գայ, երթանք մօտը բարեկամ մը ունիմ անոր ցուցնենք : Ակնավաճառը քաղաքավարութիւն ընելով աշխարհ հետը չարկի : Երիտասարդը կառնէ զօհարեղէնները կերթայ : Ակնավաճառը երկար սպասելէ ետեւ կ'սկսի անհանգիստ ըլլալ եւ հարցունքներ ընել հարսնացուին : Անոջը տուած պատասխանները եւս առաւել

կատած կը պատճառեն ակնավաճառին, եւ խեղճը երկու ժամ սպասելէ ետեւ զխտուն եկածը հասնելու ակնավաճառին զինուորներ կը կանչէ, որոնք կառնեն զիրաւհաւան հարսնացու ու տեսչութեան դուռը կ'իջեցնեն :

Անցեալ չորեքշաբթի օրը, չորս շաբթորդ Ա. Պօլոյ Պալազ բազարի փողոցի խանին մէջ վաճառականեակի մը դուռը բաց եւ մէջն ալ մարդ չտեսնելով, ներս կը մտնեն եւ ուղղակի սնտուկին քով կը թաղվի ընտելու կաշիտտին : Այդ միջոցին տէրը կուգայ, եւ եղելութիւնը անսնելով կերթայ խանին դանտպանին եւ քանի մը դրացիներու կ'իմացնէ : Անոնք ալ խանին դուռը կը դարձունեն եւ տեսչութեան կ'իմացնեն որ խաղից կը հասնի :

Պողերն իմանալով որ պիտի բռնվին, առանց բան մը վերցունելու դուրս կընեն սենեակէն, ու խանին դուռը կը թաթան որ անկէջ ալ դուրս ելնեն, բայց դանտպանն ու տեսչութեան զինուորները թող չեն տար : ասիկէ կ'ալ կը ծաղի, որուն մէջ զողերուն երկուքը կը յաջողին դուրս ելնելու փախելու, եւ երկուքը կը բռնվին : Պախուղներուն մէջն ալ դաշնը ձեռքը սպառնալով ընելով մինչեւ կամուրջին մէջ տեղը կը հասնի, ու հոն ետեւէն առջեւէն տեսչութեան զինուորներ վրան հասնելով կը բռնվին եւ իր միտ երկու ընկերներուն հետ տեսչութեան դուռը կը տարվի :

Ա. Էմինա լրագիրը կը պատմէ թէ ասիկէ ութ ամիսի չափ առաջ Պէյօղու յոյն մը սպաննուիլ էր իր երկու կրօնակիցներուն ձեռքը, եւ երեսնաւոր զորները բռնվելով յանցանքին խտտովաներ ու մահուան դատապարտութիւն : Այս պարագայիս մէջ առաջարկեցաւ սպանելոյն կնոջը որ արեան դիմառնելով անոնց պատիժը շղթայակապ աշխատութեան փոխարկվի : Անր յանձն չառաւ, եւ անպատճառ անոնց մեռելու պահանջեց :

Անցեալ շաբթի օրը յունաց ազգին զխտուններն այս կինը քովերին կանչելով շատ աշխատեցան որ արեան գինն ընդունել տան բայց չկրցան : Ա. Էմինա կնոջն հաստատամտութիւնը խախտելու համար ըսին իրեն թէ մահուան վճիռն ի գործ դնելու համար դահիճ գանելն անհարկ է : « Արեւմտ, պոսաց կինը, ես կը կատարեմ այդ պաշտօնը, թէ որ մէկը չգտնուի իմ վրէժս առնելու : »

Անոյն այս անտիփոխելի հաստատամտութեանը վրայ . կ'եղանազործնելու մահուան պատիժը քիչ օրէն ի գործ պիտի դրվի կրանն :

Անգրիանու պօլսին մայիս 12/23 թուով լուր կուտան թէ շերամներն այս տարի մեծ յաճողութեան յոյս կուտան, օրերն աղէկ երթարուն պատճառաւ :

Մեծնալը ամառիս լրագիրն մեծ դէմ ըսած խօսքերն պատասխանը :

Մեծնալը երկու կէտի վրայ ձամբար տակեր է մեզի դէմ : Այս կէտերուն առաջինն է Լուս թելսի ողբալն անցքը :

Այս անցքին վրայ ազգային Պատրիարքարանէն մեզի հարողոված եւ լրագրոյս 429 թուոյն մէջ հրատարակված լուրերուն մեր քովէն հարված խոշոր սուտեր եւ



